Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 17.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 8-ի նյութական իրավունքի բաժնի 2"61-րդ, 8"22-րդ, 17"27-րդ, 21"43-րդ, 23"57-րդ հարցերը:

61-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից սխալ է մեկնաբանվել քրեական օրենքի գործողության սկզբունքները, հավակնորդի կողմից մեջբերված դրույթները վերաբերելի են ըստ տարածության քրեական օրենքի գործողության սկզբունքին, ընդ որում հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ հանցանքը կատարվել է օտարերկյա քաղաքացու կողմից ՀՀ-ից դուրս օտարերկյա քաղաքացու նկատմամբ, հետևաբար ներկայացված դրույթը և դրանցից բխող եզրահագումները ընդունելի չեն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

22-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չէ, քանզի կաշառքի շորթման վերաբերյալ փվյալներ առկա չեն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

27-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները խնդրի ձևակերպման մեջ տեղ գտած անճշտության պարագայում, ընդունելի են հանձնաժողովի համար, ուստի տրվում է 1 միավոր:*

43-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրի պայմաններից, երկակի մեկնաբանման*

հիմք չի կարող տալ մուտք գործելով եզրույթը: Այլ կերպ՝ հավակնորդի պնդումները չեն բխում խնդրի փաստական հանգամանքներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:

57-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում գործող ՀՀ քրեական օրենսդրության նորմերի ճիշտ մեկնաբանությունից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***8419*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 21 միավորը բարձրացնել 1 միավոր՝ արդյունքում արձանագրել 22 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ